տրւում է 60 բոպէ տևողութեամբ դասեր, երբեմն էլ աւելի քիչ։ Գիւղացիութեան մեծամասնութիւնը անգրագէտ է։

Դպրոցի մօտ, դէպի հարաւ գտնւում է գերեզմանատունը, որը ծածկւած է մեծադիր, քառակուսի քարերով։ Այստեղ կայ մինչև 311 տարեան գրւած տապանաքար։ Գիւղն ունի նաև մի բաղնիք և վեց ջրաղաց։

Նամակերտն իր բնական ամուր դիրքի և բնակիչների քաջութեան պատճառով յաճախ կարողացել է յաջողութեամբ դիմադրել գիւղի վրայ արշաւող աւազակախմբերին և նոյնիսկ կանոնաւոր զօրախմբերի. ափսոս որ ներքին անմիաբանութիւնն ու երկպառակութիւնը նրանց ոյժերն երբեմն ջլատում է։

Նայած գիւղի ընտանիքների ունեցած կարողութեան և աշխատանքի բոլոր ճիւղերից ստացած տարեկան եկամուտի չափին՝ կարելի է բաժանել բնակչութիւնը հետևեալ կարգերի։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	500
2	Ջուններ	65
3	Միջակ	900
4	Ուններ	400
5	Հարուստ	100
	Ընդամենը	1965

ՂԱՌՂՈՒՆ

Նամակերտից դէպի հարաւ-արևելք, մօտաւորապէս երեք քառորդ ֆարսախի վրայ, մի ծառազարդ հովտում փռւած է Ղառղունը. սա նոյնպէս զուտ հայաբնակ է և համարւում է շատ հին գիւղ, ինչպէս Նամակերտը։ Գիւղն իր բնական դիրքով ներկայացնում է մի գեղեցիկ պատկեր. գեղեցիկ են մանաւանդ նրան շրջապատող ծովանման արտերն ու սիրուն մարգագետինները։ Գիւղի միջից հոսում են

* Տես «Ծրագիր» Սիմէօն Զաւարեանի։